

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
«Պատմություն»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Պատմություն 022201.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Պատմության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2023/24
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները
 Ծրագրի դիմորդը պետք է ունենա.
 • միջնակարգ կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթություն,
 • ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով հայոց լեզու, հայոց պատմություն առարկաներից գրավոր միասնական քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները
 Ծրագրի նպատակն է պատրաստել կրթության, գիտության, մշակույթի ոլորտների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի համար պատմության բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն
 Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.
 1. Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:
 2. Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:
 3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:
 4. Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ
 Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.
 1. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:
 2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:
 3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:
 4. Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:
 5. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
 6. Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

7. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

9. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:
3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Հետազոտական աշխատանք/մասնագիտական գրականության վերաբերյալ
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Զեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Մտուզարքներ
- Քննություններ
- Ընթացիկ քննություններ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն

ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, էջ 5-11:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Պատմություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, թանգարաններում, արխիվներում, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի ասպարեզներում, տուրիզմի ոլորտում, ՀՀ Կրթության և գիտության, Մշակույթի նախարարություններում, Ազգային անվտանգության ծառայությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Թանգարաններում.

- էքսկուրսավար,
- գիտաշխատող,
- բաժնի վարիչ,
- տնօրեն:

Արխիվներում.

- գիտաշխատող,
- բաժնի վարիչ
- տնօրեն:

Ռադիոյում, հեռուստատեսությունում, մամուլում.

- լրագրող, վերլուծաբան

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

- ստորին և միջին օղակների ծառայող:

Մանկավարժի որակավորման համար լրացուցիչ կրթություն ստանալու դեպքում կարող է աշխատել նաև դպրոցում.

- ուսուցիչ

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

«Պատմություն» կրթական ծրագիրն իրականացնելու համար ֆակուլտետում առկա են 4 լսարաններ, որոնցից մեկը հազեցված է տեխնիկական միջոցներով՝ համակարգիչ և տեսասարք: Մասնաճյուղում հասանելի է ինտերնետ կապը՝ էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար: Ունենք համապատասխան դիդակտիկ նյութեր՝ քարտեզներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

ԵՊՀ Պատմության կրթական ծրագիր

ՀՊՄՀ Պատմության կրթական ծրագիր

Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի կրթական ծրագիր

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Մասնաճյուղում իրականացվող «Պատմություն» կրթական ծրագիրը 2022 թվականից իրականացվելու է մոդուլային ուսուցմամբ: Կարևոր շեշտը դրվել է ժամանակագրության վրա՝ Հայաստանի հարակից երկրների, Ռուսաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների պատմությունը ուսումնասիրելու են հայոց պատմությանը զուգահեռ: 7-րդ կիսամյակում նախատեսվում է «շարժունության պատուհան»՝ 12 կրեդիտ արժեքով, որոնք ուսանողները կարող են հավաքել ինչպես Մասնաճյուղի հարակից ծրագրերից, այնպես էլ՝ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից:

Մասնաճյուղում իրականացվող «Պատմություն» կրթական ծրագրի ուսանողները ի թիվս շատ դասընթացների, ուսումնասիրելու են արևելյան լեզուներից մեկը՝ վրացերեն կամ ադրբեջաներեն: Արևելյան այս լեզուներից մեկի ուսումնասիրությունը ավելի մրցունակ կդարձնի մեր շրջանավարտներին աշխատաշուկայում՝ ՀՀ զինված ուժերում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում և այլն:

18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան

- կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

Հետազոտական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդները:

Հաղորդակցման

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցերը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

SZS կիրառության

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու Moodle հարթակը դասապրոցերը իրականացնելու համար:

2. Մասնագիտական կարողություններ

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական գործունեություն

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն/ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար / :

- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:
Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ
- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրագույն դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:	Բ1	Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:
Ա2	Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:	Բ2	Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:
Ա3	Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:		
Ա4	Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ		Բ3	Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:
Գ1	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:	Բ4	Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:
Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:		
Գ3	Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:	Բ5	Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:
Գ4	Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:	Բ6	Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:
		Գ7	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
Գ5	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		

Գ 6	Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:	Գ 8	Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
Գ 9	Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																		
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ9
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B05												+	+						
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B09												+	+						
Անգլերեն/ֆրանսերեն/ վրացերեն-1	0305/B15							+					+	+						
Անգլերեն /ֆրանսերեն/վրացերեն-2	0305/B16							+					+	+						
Ռուսաց լեզու-1	0305/B03							+					+	+						
Ռուսաց լեզու-2	0305/B08							+					+	+						
Քաղ.պաշտպան. և արտակարգ իրավիճակ. բնակչ. առաջին բուժօգնություն	0001/B07																	+		
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B02									+				+	+					
Փիլիսոփայություն	0304/B12	+											+	+						+
Տնտեսագիտության հիմունքներ	0201/B17	+										+		+						
Գործարարության հիմունքներ	0201/B17	+										+		+						
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B17			+						+		+		+	+	+				
Մշակութաբանության հիմունքներ	0202/B17											+	+	+	+	+				
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B04							+						+						
Կրոնագիտության հիմունքներ	0304/B17			+						+		+		+	+	+				
Իրավունքի հիմունքներ	0304/B14									+				+	+	+				
Բարոյագիտության հիմունքներ	0303/B17													+	+					
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/B17											+		+	+	+				
Տրամաբանության հիմունքներ	0304/B17									+		+	+							
Հոգեբանության հիմունքներ	0303/B17										+		+	+	+					
Կիրառական վիճակագրություն	0105/B17										+			+	+	+				
Մաթեմատիկայի հիմունքներ	0105/B17									+				+	+	+				
Հաղորդակցման հմտություններ													+	+						
Քննական և ստեղծագործական մտածողություն													+	+						+
Մեղիագրագիտություն													+	+						
Ռուսաց լեզու-3													+	+						+
Անգլերեն-3										+		+		+						
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B17									+		+		+						
Հայաստանի պատմական աշխարհագրություն և հայոց պատմություն	0304/B18			+	+	+	+			+	+			+		+	+			
Հին Արևելքի պատմություն	0304/B21				+	+	+				+			+	+	+	+			

Հին Հունաստանի և Հռոմի պատմություն	0304/B61					+	+	+				+			+	+	+	+				
Նախնադարյան հասարակության պատմություն	0304/B19	+				+			+			+					+		+			
Հայոց պատմություն-1	0304/B20			+	+	+	+					+	+			+	+					
Հայոց պատմություն-2	0304/B25			+		+	+					+	+			+		+				+
Ազգագրության հիմունքներ և հայ ազգագրություն /ՀԲ	0304/B31					+			+							+						+
Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն-1	0304/B24					+	+	+				+	+			+		+				
Հայոց պատմություն-3	0304/B29			+		+	+					+	+			+		+				
Եվրոպայի միջին դարերի պատմություն-1	0304/B30					+	+	+					+			+	+	+				
Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն-2	0304/B26						+	+				+	+			+		+				
Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն	0304/B27	+				+			+				+			+	+					
Գրաբար	0302/B28								+				+	+								
Հայոց պատմություն-4	0304/B33			+		+	+	+	+			+	+			+		+				
Եվրոպայի միջին դարերի պատմություն-2	0304/B34						+						+			+	+	+				
Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն-3	0304/B35					+	+	+	+	+		+	+			+	+	+				
Հայոց պատմություն-5	0304/B39						+	+				+	+			+		+				
Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր դարերի պատմություն-1	0304/B37						+		+	+		+	+			+	+	+				
Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն-4	0304/B40			+		+	+					+	+			+		+				
Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն/ՀԲ	0304/B41					+			+			+				+						
Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր դարերի պատմություն-2	0304/B47	+	+									+								+		
Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն	0304/B43						+						+			+	+	+				
Թանգարանագիտություն և արխիվագիտություն	0304/B48					+	+	+				+				+		+	+			
Հայոց պատմության աղբյուրագիտություն /ՀԲ	0304/B46						+	+	+	+		+	+			+		+				
Եվրոպայի և Ամերիկայի երկրների նորագույն պատմություն	0304/B51	+	+									+								+		
Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն	0304/B38						+	+					+			+	+	+	+			
Աշխարհաքաղաքականություն	0304/B55			+								+									+	
Հայոց պատմության պատմագրություն /ՀԲ	0304/B49			+			+	+	+			+	+			+		+				
Հայ և համաշխարհային արվեստի պատմություն	0304/B 42			+							+		+									
Հայաստանի հարակից երկրների և Ռուսաստանի պատմություն -5	0304/B36			+			+				+											
Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն	0304/B42					+	+	+				+				+		+	+			
Պառլամենտարիզմի պատմություն	0304/B54																					

Դասական կամ արևելյան լեզուներ- վրացերեն/ ադրբեջաներեն	0304/B54	+	+									+		+		+				
Դեմոկրատիայի պատմություն	0304/B54								+				+	+						
Հոմեոպատիկ ժառանգությունը և եվրոպական հանրային	0304/B54			+	+							+		+		+				
Հայ ռազմարվեստի պատմություն	0304/B54				+	+						+	+		+	+		+		
Նոր և նորագույն ժամանակների սոցիալ-քաղաքական պատմություն	0304/B54			+	+							+		+		+				
Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն	0304/B54				+							+		+						
Փիլիսոփայության պատմություն	0304/B54				+	+	+					+		+			+	+		
Ուրբանիզմի պատմություն	0304/B42				+	+	+					+		+			+	+		
Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն	0304/B54					+	+					+		+	+	+				
Անցումային շրջանի ազգաբանություն	0303/B54				+	+	+					+		+			+	+		
Առաջավոր Ասիայի և Կովկասի քաղաքակրթություն, Այսրկովկասի հնագիտություն	0303/B54				+	+	+					+		+			+	+		
Միջուրբի պատմության հիմնահարցեր	0303/B54				+	+	+					+		+			+	+		
Հետազոտության պլանավորում և մեթոդներ	0304/B63				+	+	+					+		+			+	+		
Կառավարման համակարգերը համաշխարհային պատմության մեջ	0304/B64				+	+	+					+		+			+	+		
Ամերիկայի պատմություն	0304/B67				+	+	+					+		+			+	+		
Ուսումնական պրակտիկա	0304/B57	+	+						+	+				+			+			
Մասնագիտական պրակտիկա	0304/B60				+	+						+		+	+	+	+			
Ավարտական աշխատանք	0304/B61				+	+						+		+	+	+	+			

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

**Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
«Պատմություն»
ՕՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ՝ ՊԱՐՏԱԴԵՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1.0302/B05	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
<p>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը, ձևավորելու բանավոր խոսքի կուլտուրա և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն): սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք, գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, աշխատելու թիմում: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> քննարկում /բանավեճ համագործակցային աշխատանք մտազրոհ վերլուծական մեթոդ խոսքային կամ բանավոր մեթոդ գրավոր մեթոդ բացատրական մեթոդ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: Թեմա 3. Բառային մակարդակ: Թեմա 4. Քերականական մակարդակ: Ձևաբանություն: Թեմա 5. Շարահյուսություն:</p>		
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014: Հայոց լեզու և խոսքի մշակույթ, (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015: Սաստրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002: Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003: 		

5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:

1.0302/B09	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
6.2-րդ կիսամյակ	7. ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում:

Դասընթացի խնդիրները.
 1. բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
 1. ներկայացնելու խոսքի արժանիքները,
 2. կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները:
բ. գործնական մասնագիտական կարողություններ
 1. լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները:
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
 1. կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, դրսևորելու խոսքային բարձր էթիկետ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.
Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:
Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
 1. քննարկում /բանավեճ
 2. համագործակցային աշխատանք
 3. մտազրոհ
 4. վերլուծական մեթոդ
 5. խոսքային կամ բանավոր մեթոդ
 6. գրավոր մեթոդ
 7. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
 Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.
Թեմա 1. Խոսքի արժանիքները: **Թեմա 2.** Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: **Թեմա 3.** Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: **Թեմա 4.** Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:

14. Հիմնական գրականության ցանկ.
 1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014:
 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015:
 3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002:
 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:
 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:

1. 0305/B03	2. Ռուսաց լեզու-1	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջումներին:

<p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը, 2. ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար, 3. կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին), 2. ընկալելու և սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. էվրիստիկական մեթոդ 4. մտազրոհ 5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են</p> <p>Ստուգաբքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Հնչյունաբանություն: Չայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բաժին 2. Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Բաժին 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Բաժին 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Русский язык, Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.

1. 0305/B08	2. Ռուսաց լեզու -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
6. 3-րդ կիսամյակ	7. ստուգարք	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ու-նակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:</p> <p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, 2. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով, 3. գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակության հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով, 2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակության առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները, 3. վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ, 4. թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը, 5. զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը, 2. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. էվրիստիկական մեթոդ 4. մտազրոհ 5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շողկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բաժին 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության</p>		

գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Բաժին 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: **Բաժին 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Русский язык, Под общ. ред. Л. М. Мкртчяна, Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1. 0305/B15	2. Անգլերեն -1	3. 2 ECTS կրեդիտ
-------------	----------------	------------------

4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
-----------------	-----------	--

6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
------------------	-------------	--

8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:

Դասընթացի խնդիրները.

1. ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար,
2. զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը,
2. թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները,
3. թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները,
4. տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս,
2. ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը,
3. կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. քննիչական/փոխանցելի կարողություններ

1. տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից,
2. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում,
3. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտազրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,

- ռեֆերատ,
- լուսատեսաշար
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները:

Բաժին 2. Քերականություն: Խոսքի մասեր: Ծարահյուսություն: **Բաժին 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն:** Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitryan, Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan, 2004.
2. Cincotta, Howard (Ed.). An Outline of American History. United States Information Agency., 1994.
3. Kirn, Elaine. About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division., 1989.
4. Myers, Sondra (Ed.). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 1997.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1. 0305/B16	2. Անգլերեն- 2	3. 2 ECTS կրեդիտ
--------------------	-----------------------	-------------------------

4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
------------------------	------------------	--

6. 2-րդ կիսամյակ	7. ստուգարք	
-------------------------	--------------------	--

8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:

Դասընթացի խնդիրները.

1. ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը,
2. հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորարանությունների ոլորտից:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները,
2. կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ընկալելու և վերարտադրելու կարողացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը,
2. շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան,
3. կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում,
2. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ,
3. ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները..

Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտազրոհ

3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. <ul style="list-style-type: none"> • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • պրեզենտացիա, • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: Բաժին 2. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan, 2004, 2. Cincotta, Howard (Ed.). An Outline of American History. United States Information Agency, 1994. 3. Kim, Elaine. About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division, 1989. 4. Myers, Sondra (Ed.). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 1997. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1.0305/B15	2.Ֆրանսերեն – 1	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:		
Դասընթացի խնդիրները. <ol style="list-style-type: none"> 1. խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, 2. ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, 3. հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները: 		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, 2. ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: 		
բ. գործնական մասնագիտական կարողություններ <ol style="list-style-type: none"> 1. ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, 2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները, 3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), 4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: 		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ <ol style="list-style-type: none"> 1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, 		

<p>2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները,</p> <p>3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր,</p> <p>4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:</p>
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մտեցում պատմական փաստերի նկատմամբ:</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> անհատական և խմբային առաջադրանքներ ընթերցանություն թեստ ռեֆերատ դիագնոստիկ ստուգում շնորհանդես ինքնուրույն աշխատանք:
<p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգաքար</p> <p>Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:</p>
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: Թեմա 5. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Թեմա 6. Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: Թեմա 7. Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:</p>
<p>14.Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008 M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant), M. Djoulhakian, R. Melikstian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

1.0305/B16	2.Ֆրանսերեն – 2	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.2-րդ կիսամյակ	7.ստուգաքար	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները: 		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, 		

2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները,
 3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ),
 4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր,
- գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**
1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն,
 2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները,
 3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր,
 4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

Նախապես տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2.** Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 3.** Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 4.** Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ **Թեմա 5.** Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: **Թեմա 6.** Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում: **Թեմա 7.** Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008.
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant),
4. M. Djoulhakian, R. Meliksntian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

1. 0305/B03	2. Վրացերեն -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 0/10/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջումներից:</p> <p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p>		

<ol style="list-style-type: none"> ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը, ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար, կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին), ընկալելու և սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները: 		
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն. Սեր: Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: Բաժին 3. Բարոյականություն և ազատություն: Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակույթային արժեհամակարգի համատեքստում: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն:</p>
<p>14.Հիմնական գրականության ցանկ.</p> <p>1. Разин А., Этика, Москва, 2003. 2. Дробницкий О., Понятие морали, Москва, 2004. 3. Мур Дж., Прунципы этики, Москва, 1984. 4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000. 5. Словарь по этике.</p>

1. 0303/B17	2. Հոգեբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7. ստուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզականային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:</p> <p>Դասընթացի խնդիրները</p> <p>1. բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, 2. լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, 3. ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <p>1. ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները, 2. տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները, 3. պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները, 4. բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին:</p>		

<p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> մեկնաբանելու անձի հուզականացման ոլորտի մասին, տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները, վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով: 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> դասախոսություն քննարկում բանավեճ գործնական պարապմունք ռեֆերատ/էսսե անհատական և խմբային առաջադրանքներ: 		
<p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p>		
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: Թեմա 2. Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: Թեմա 3. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: Թեմա 4. Հոգեկանի ակտիվության մակարդակները: Թեմա 5. Հոգեկանի և գիտակցության զարգացումը: Թեմա 6. Անձի հոգեբանական բնութագիրը: Թեմա 7. Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: Թեմա 8. Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: Թեմա 9. Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: Թեմա 10. Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: Թեմա 11. Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: Թեմա 12. Մտածողություն, տեսակները, գործընթացները: Թեմա 13. Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: Թեմա 14. Անձի հուզականացման կողմը: Թեմա 15. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:</p>		
<p>14.Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., 2010: Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997: Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005: Маклаков А.Г., Общая психология. М., 2007: Немов Р.С., Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003). Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010. 		

1.0304/B17	2.Տրամաբանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5. 10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.ստուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, գերծ մնալ տրամաբանական սխալներից:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները, ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ, ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին, ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և 		

հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները,
2. մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները,
3. սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները,
2. զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները,
3. զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ6.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Գիրատվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2.** Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4.** Տրամաբանության օրենքները: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Ապացուցում և հերքում: **Թեմա 7.** Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

1.0303/B17	2.Սոցիոլոգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.ստուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: 2. ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում: 		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները, 2. սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և 		

<p>զարգացման հիմնական օրինաչափությունները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները, վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը, մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> աշխատելու թիմում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ5. Կատարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> դասախոսություն քննարկումներ բանավեճեր ռեֆերատներ զեկուցումներ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: Թեմա 2. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: Թեմա 3. Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, ֆկուս խումբ: Թեմա 4. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: Թեմա 5. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:</p>		
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Бабосов Е., Прикладная социология. Тетра Системс, 2001. Горшков М., Шереги Ф., Прикладная социология. Методология и методы. Москва, 2011. Горшков М., Шереги Ф., Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012. Долгоруков А., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011. Ельмеев В., Овсянников В., Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.) Кравченко А., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М., 1998. 		

1.0105/B17	2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.ստուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ol style="list-style-type: none"> ձևավորել բնագիտական աշխարհայացք, ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը, բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները, 		

<p>4. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:</p>
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը, 2. ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին, 3. մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում, 2. կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալու որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին, 3. կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը, 2. օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան, 3. ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում: Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը), 2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը), 3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա), 4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային- որոնողական), 5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ), 6. քննադական մտածողության մեթոդները, 7. խմբային աշխատանքի մեթոդները, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Մտուգարք. Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: Թեմա 2. Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: Թեմա 3. Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Թեմա 4. Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Թեմա 5. Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Թեմա 6. Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Թեմա 7. Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Եր., 2007: 2. Канке В., Концепции современного естествознания, Логос., М., 2002. 3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова).

1. 0104/В 17	2. Կիրառական վիճակագրություն	3. 2 ECTS կրեդիտ
--------------	------------------------------	------------------

4. 2,5 ժամ/շաբ.	5. 10/0/0
6. 3-րդ կիսամյակ	7. ստուգարք
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:</p>	
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ձևակերպելու վիճակագրական խնդիրներ, 2. կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների պոստուլատները, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ: 2. ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը, անելու հետևություններ: 	
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունը(ներ)ը.</p> <p>Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>	
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն աշխատանքներ 	
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անց է կացվում բանավոր:</p>	
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Նկարագրական վիճակագրություն: Բաժին 2. Նմուշային եղանակ: Բաժին 3. Գնահատման տեսություն: Բաժին 4. Միջակայքային գնահատականներ:</p>	
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրագիրք, ԵՊՀ, Եր., 2016. 2. Գասպարյան Կ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, Եր., 2017: 3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, Եր., 2000: 4. Ивченко Г. , Медведев Ю. , Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014. 	

1.0105 / B04	2. Մաթեմատիկայի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ/շաբ.	5. 10/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
<p>8. Ծրագիրը նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի, ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</i></p> <ol style="list-style-type: none"> 1. լուծելու հանրակրթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցեր: 2. ճիշտ մշակելու թվային տվյալները, մասնագիտական վերլուծությունները գրաֆիկների, սանդղակների, մասերով, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</i></p> <ol style="list-style-type: none"> 1. տարրական ֆունկցիաների հենքի վրա դասակարգել ֆունկցիաները, սահմանել ֆունկցիայի անընդհատությունը, հաշվել նրա սահմանը: 2. գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում, 3. գործնականում իրականացնել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</i></p> <ol style="list-style-type: none"> 1. աշխատել հետազոտական խմբում, 2. կիրառել գիտելիքները պրակտիկայում: 3. վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ: 		

<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, աղյուսակներ և այլն)</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: Բաժին 2. Բազմությունների տեսության տարրեր և թվային բազմություններ: Բաժին 3. Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: Բաժին 4. Վեկտորական հաշիվ: Բաժին 5. Տեքստային խնդիրներ: (տոկոսի, խառնուրդների և շարժման խնդիրներ): Բաժին 6. Հանրահաշվական կորեր(ուղիղ գիծ, շրջանագիծ): Բաժին 7. Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրության տարրեր:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ. 1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004: 2. Тихомиров Н. Б., Шелехов А. М., Математика, Учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000. 3. Քարտաշյան Ա.Հ. Մաթեմատիկա Երևան. Լույս, 1983 4. Стойлова Л.П. Математика Москва, Академия, 2007 5. Лавров И.А., Максимова Л.Л. Задачи по теории множеств, математической логике и теории алгоритмов Москва, Физматлит 1995</p>

1.0302/B17	2.Մեդիագրագիտություն	3. 2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.Մտուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողին ներկայացնել հասարակության և մեդիայի փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացնել մեդիայի կողմից հանրային կարծիքի, սոցիալական դիրքորոշման, արժեհամակարգի ձևավորման մեխանիզմներին, ուսումնասիրել հասարակական գիտակցության և մեդիամիջավայրի փոխազդեցությունների շրջանակը, հասկանալ դրանց նախադրյալները և հետևանքները::</p>		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. հիմնավորելու մեդիայի և տեղեկատվական հասարակության էությունը, դրանց հետ կապված հասկացությունները և հիմնական տեսությունները, 2. որոշելու մեդիայի արժեքաստեղծ գործառույթը, վերջինիս միջոցով հասարակական արժեքների ձևավորման փուլերը, 3. մատնանշելու սոցիալական դիրքորոշման փոփոխման մեխանիզմները՝ մեդիայի դերն ավելի ամբողջական պատկերացնելու համար, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերակելու մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը, 2. գնահատելու տեղեկատվական հասարակության հայաստանյան յուրահատկությունները, 3. հետազոտության ժամանակակից մեթոդներով համեմատելու մեդիատեսակները (մեդիա)՝ ըստ իրենց ազդեցիկության աստիճանի, 4. տարբերակելու ամբոխի կարգավորման/մանիպուլացման մեխանիզմներն ու հնարքները կոնկրետ դեպքերում, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. արժևորելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու մեդիաարտադրանքին, 2. սեփական հետազոտություններում մեթոդաբանական սկզբունքներով համակարգելու մեդիաազդեցության մեխանիզմները: 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		

<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> դասախոսություն գործնական պարապմունք ինքնուրույն խատանքներ:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Մտուգարքն անց է կացվում բանավոր:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հասարակության կառուցվածքը: Հասարակություն և անհատ: Թեմա 2. Մեդիա և մեդիամիջավայր: Մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը: Թեմա 3. Տեղեկատվական հասարակություն. ձևավորման նախադրյալները: Թեմա 4. Հասարակական գիտակցություն-մեդիամիջավայր. փոխադարձ ազդեցության բնույթը: Թեմա 5. Հասարակական գիտակցության մանիպուլյացիա: Թեմա 6. Մեդիա և արժեքներ. մեդիայի արժեքաստեղծ գործառույթը:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Morin E., Au-delà de la globalisation et du développement, société-monde ou empire-monde ? », La revue du MAUSS, 20, pp. 43-53, 2002. Назаров М. М., Массовая коммуникация и общество. Введение в теорию и исследования. — М.: «Аванти плюс», 2003. Поликарпова Е.В., Аксиологические Функции Масс-Медиа В Современном Обществе, Ростов-на-Дону, 2002.

1.0302/B17	2. Հաղորդակցման հմտություններ	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6. 3-րդ կիսամյակ	7. ստուգարք	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:</p> <p>Դասընթացի խնդիրները՝</p> <ol style="list-style-type: none"> Նպաստել սովորողների քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը: ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները, բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները, դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ, հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> տիրապետելու որոշակի աշխատանքային հմտությունների և տարբեր միջավայրերում քաղաքակիրթ, բարյացակամ հաղորդակցվելու ունակությունների: ընտրելու հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվաոճական միջոցներ. <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> դրսևորելու լեզվական բարձր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությում:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> Պասիվ դասախոսություն Ակտիվ դասախոսություն <ul style="list-style-type: none"> ✓ հարցուպատասխան ✓ զրույց Բնտերակտիվ դասախոսություն <ul style="list-style-type: none"> ✓ «PowerPoint» համակարգչային ծրագրով տեսադրվագաշարերի ցուցադրում ✓ հարցուպատասխան 		

✓ <i>բանավեճ</i>
✓ <i>գրույց</i>
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:
13. Համառոտ բովանդակություն. Թեմա 1. Հաղորդակցության դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հաղորդակցման խոչընդոտները. գործնական հաղորդակցում: Թեմա 3. Հաղորդակցման դասակարգումները: Թեմա 4. Ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Երևան, 2001: 2. Գաբրիելյան Յու., Լեզվական հաղորդակցության տեսություն, Երևան, 2018: 3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2009: 4. Պետրոսյան Ա., Գործարար հաղորդակցություն, Երևան, 2003թ.: 5. Պետրոսյան Հ., Մարտիրոսյան Ա., Գործարար և գիտական հայոց լեզու, Երևան, 2015: 6. Քարնեգի Դ., Ինչպե՞ս ձեռք բերել բարեկամներ և ինչպե՞ս ազդել մարդկանց վրա, 1936:

1.0304/B17	2. Քննական և ստեղծագործական մտածողություն	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.10/0/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել քննական և ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները, ուսանողների մոտ ձևավորել ստեղծագործական և քննական մտածողություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու քննական և ստեղծագործական մտածողությունը 2. մեկնաբանելու քննական և ստեղծագործական մտածողության հիմնական սկզբունքներն ու հատկանիշները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու քննական և ստեղծագործական մտածողության գործիքները: 2. մեկնաբանելու քննական մտածողության տեսակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. գրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ստեղծագործական և քննական մտածողության սահմանումը: Թեմա 2. ստեղծագործական և քննական մտածողության կարևորությունը: Թեմա 3. ստեղծագործական և քննական մտածողության զարգացման փուլերը: Թեմա 4. Ստեղծագործական և քննական մտածողության խրախուսման մեթոդները: Թեմա 5. Քննական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացման մոտեցումները: Թեմա 6. Ստեղծագործական և քննական մտածողության զարգացման գործիքները: Թեմա 7. Քննական մտածողության տեսակները: Թեմա 8.		

Ստեղծագործական մտածողության սկզբունքները, հիմնական հասկանիչները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Бутенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176 с.
2. Ивунина Е. Е. О различных подходах к понятию «критическое мышление» // Молодой учёный. — 2009. — № 11. — С. 170—174.
3. Турчин В. Ф. Феномен науки. Кибернетический подход к эволюции. — Изд. 2-е — М.: Словарное издательство ЭТС. — 2000. — 368 с.
4. Халперн Д. Психология критического мышления. — СПб.: Питер, 2000. — 512 с.

1.0305/B09	2.Ռուսաց լեզու -3	3.2 ECTS կրեդիտ
------------	-------------------	-----------------

4. 2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
-----------------	----------	--

6.3/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
-------------------	------------	--

8. Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:

Դասընթացի խնդիրները.

1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը,
2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները,
3. զարգացնել ռուսերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները,
4. զարգացնել ռուսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ռուսերենի բառակազմության միջոցները:
2. կիրառելու հոմանիշները, հակահոմանիշները և համանունները համատեքստում:
3. գործածելու ռուսերենին բնորոշ խոսակցական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:
2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ:
3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն:
2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:
3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցված բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. գրույց լեզվակրի հետ
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Շարահյուսություն: **Թեմա 2.** Ուղղագրության հիմնական կանոնները: **Թեմա 3.** Մասնագիտական տեքստ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Русский язык. Под общ.ред. к.ф.н. доцента Лалаян С.А. Ер., изд-во ЕГУ, 2018.

2. Русский язык. Под общ.ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
 3. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015.
 4. Учебные пособия по специальности.

1.0201/B17	2.Անգլերեն -3	3.2 ECTS կրեդիտ
4.2,5 ժամ/շաբ.	5.0/10/0	
6.3/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
<p>8.Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:</p>		
<p>Դասընթացի խնդիրները.</p>		
<ol style="list-style-type: none"> 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել անգլերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p>		
<p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p>		
<ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները: 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում: 3. գործածելու անգլերենին բնորոշ խոսակցական կառույցներ: 		
<p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p>		
<ol style="list-style-type: none"> 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները: 2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ: 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ: 		
<p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p>		
<ol style="list-style-type: none"> 1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն: 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով: 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p>		
<p>Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p>		
<p>Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p>		
<ol style="list-style-type: none"> 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. գրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք 		
<p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p>		
<p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p>		
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p>		
<p>Թեմա 1. Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը: Թեմա 2. Խոսակցական անգլերենին բնորոշ կառույցների ուսուցում: Թեմա 3. Բանավոր խոսք՝ ուղղված ուսանողների անհատական ստեղծագործական մտքի ու վերլուծական ունակությունների խթանմանը:</p>		
<p>14.Հիմնական գրականության ցանկ.</p>		
<ol style="list-style-type: none"> 1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015. 2. Mkhitarian K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017. 3. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010. 4. Alexander L.G., Fluency In English, Longman, 1967. 5. Alexander L.G., For and Against, Longman, 1969. 		

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ
ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**

1. 0304/B18	2. Հայաստանի պատմական աշխարհագրություն և հայոց պատմություն	3.9 ECTS կրեդիտ
4. 7 ժամ/շաբ.	5. 24/0/6	
6. 1-ին կիսամյակ	7. Եզրավակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 5-րդ դար: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության Հայկական լեռնաշխարհի, էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների մասին, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել Հին Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը: 2. ձևավորել հստակ պատկերացում հայոց միջնադարյան պետականության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին, 3. ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն, 4. ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմության հիմնական փաստական նյութը, 2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների իրադարձությունները, 3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական արժեքները, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառների նվաճումները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը, 2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում, 3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները, 4. վերլուծելու մասնագիտական խնդիրները, գտնել դրանց լուծման ճանապարհները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 1. աշխատելու թիմում: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնաղբյուր(ներ)ը.</p> <p>Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:</p> <p>Ա4. Ներկայացնելու ու մեկնաբանելու քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:</p> <p>Բ1. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:</p> <p>Բ2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ և լուծումներ:</p> <p>Բ5. Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:</p>		

Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
2. զեկուցումներ
3. ռեֆերատներ
4. քննարկումներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. գրավոր առաջադրանք, առավելագույնը՝ 4 միավոր արժեքով:

2-րդ ընթացիկ քննություն. գրավոր առաջադրանք, առավելագույնը՝ 4 միավոր արժեքով:

Ինքնուրույն աշխատանք. (2 առաջադրանք)՝ առավելագույնը՝ 4 միավոր արժեքով:

Եզրափակիչ քննություն. բանավոր հարցում, առավելագույնը՝ 8 միավոր արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Բաժին 1. Հայաստանի պատմական աշխարհագրություն

Թեմա 1. Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները: **Թեմա 2.** Հին Հայաստանի բնակչությունը: **Թեմա 3.** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը: **Թեմա 4.** Հին Հայաստանի տերիտորիալ և վարչական բաժանումը Ք.ա. 5-րդ դարից մինչև 1-ին դարը: **Թեմա 5.** Հին Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը:

Բաժին 2. Հայոց պատմություն

Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: **Թեմա 2.** Վանի թագավորություն: Երվանդունիների թագավորություն: **Թեմա 3.** Հայաստանն Առաջավոր Ասիայի հզոր տերություն: **Թեմա 4.** Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը: **Թեմա 5.** Քրիստոնեության հռչակումը Հայաստանի պետական կրոն: **Թեմա 6.** Մեծ Հայքի թագավորությունը 4-5-րդ դարերում: **Թեմա 7.** Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., /ցանկացած հրատարակություն/:
2. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Եր., 1979:
3. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963:
4. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Եր., 2001:
5. Հայ ժողովրդի պատմություն (Մելիք-Բախչյանի Ստ. խմբ.), Եր., 1975:
6. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ, հ. 1, Եր., 1971:
7. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ, Հ. 2, Եր., 1984:
8. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 1, (Հովհաննիսյան Պ., Մովսիսյան Ա.), Եր., 2007:
9. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 2, (Հովհաննիսյան Պ., Մովսիսյան Ա.), Եր., 2012:

1.0304/B19	2. Նախնադարյան հասարակության պատմություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2,5 ժամ / շաբ	5. 8/0/2	
6. 1-ին կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնառողների շրջանում հետաքրքրություն առաջացնել հեռավոր ժողովուրդների, նրանց կացութաձևի, սովորույթների ու ծեսերի նկատմամբ, չսրողելով առկա գիտական հիմնախնդիրներն ու տարբեր հայեցակետերը՝ ուսանողներին ներգրավել հետազոտական որոնումների ոլորտ, ուր անելիքներ կգտնեն պատմաբանների դեռ շատ սերունդներ, ձևավորել գիտելիքների համակարգ անտրոպոգեն, սոցիոգեն, կուլտուրոգեն և պոլիտոգեն գործընթացների վերաբերյալ, օգնել հասկանալու սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները, հասարակական ինստիտուտների առաջացման պատճառները և ժամանակակից էթոսների պատմական զարգացման առանձնահատկությունները, պատկերացում տալ մարդ-բնություն փոխգործակցության, մարդու գործունեության փոխակերպումների, համաշխարհային մշակույթում նախնադարյան հասարակությունների ներդրած ավանդի մասին, ցույց տալ ժամանակակից բազմաթիվ վարքագծային կարծրատիպերի, ավանդույթների, իրավական և բարոյական նորմերի ծագումը, հնարավորություն տալ գնահատելու անցյալի վերապրուկների դերը մշակույթում, ազգ-արյունակցական համակարգերի զարգացման

գործընթացները, ազգակցության կառուցվածքը և պահպանվածությունը:

Դասընթացի խնդիրները.

1. ծանոթացնել գիտական ճանաչողության սկզբունքներին, ձևավորել պատմական մտածողություն, պատկերացումներ հասարակական ձևերի, ամուսնության, համագործակցության, կառավարման համակարգի, կրոնի, դիցաբանության, արվեստի և դրանց դերի մասին նախնադարի յուրաքանչյուր փուլում,
2. ձևավորել պատմական գիտելիքներ, որոնք թույլ կտան հասկանալ համաշխարհային պատմության ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները, առաջընթացի էությունը և հասարակական ձևերի առաջացման պատճառները:
3. ձևավորել գրականության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ, զարգացնել կարողություններ մասնակցելու քննարկումներին և հանդես գալու պատմական թեմաների շրջանակներում,
4. ապահովել ուսումնառողների կողմից ՄԿԾ-ով սահմանված այլ դասընթացների ընկալումը և պատրաստվածությունը, երբ առաջադրվող թեման վերաբերում է մարդկության պատմության առավել վաղ շրջանի խնդիրներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նշելու նախնադարի հասարակության պատմության գիտական արդի պարբերացումը, թվարկելու փուլերը ենթափուլերով, նշելու ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրները,
2. ներկայացնելու հիմնական կոնցեպցիաները, գործածելի հասկացությունները, բացատրելու դրանց իմաստային նշանակությունն ու կիրառելիությունը,
3. ներկայացնելու բրածո ուսումնասիրության արդյունքները, բրածո էակների տարածման տիրույթները և գործունեության ձևերը,
4. ներկայացնելու նախնադարյան համայնքի շրջափուլերը, բացատրելու զարգացման առանձնահատկությունները,
5. նշելու ժամանակակից վաղ հասարակություններին, նկարագրել նրանց զարգացման առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մեկնաբանելու նախնադարյան համայնքի շրջափուլերը, օգտագործելով տարբեր ռեսուրսներ՝ ժամանակակից վաղ հասարակությունների վերաբերյալ տեղեկությունները համեմատելու, համադրելու /կամ տարբերակելու, հակադրելու/,
2. իմաստավորելու (քննադատորեն վերլուծելու) մարդու և հասարակության ծագման վերաբերյալ գիտական մոտեցումների ու հայեցակարգերի բազմազանությունը,
3. մեկնաբանելու պատմական գործընթացներն ու երևույթները նախնադարյան համայնքի տարբեր շրջափուլերում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կատարելու հետազոտական բնույթի աշխատանքներ,
2. ունենալու մարդասիրական համոզմունքներ և տոլերանտ պահվածք հասարակության մեջ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա1. Մեկնաբանելու և գնահատելու պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա4. Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսել ու բանավիճել ակադեմիական միջավայրում:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային կամ բանավոր մեթոդ
2. ցուցադրման մեթոդ
3. գրավոր մեթոդ
4. բացատրական մեթոդ

<p>5. քննարկում/բանավեճ 6. ինդուկտիվ մեթոդ 7. դեդուկտիվ մեթոդ 8. ուղղորդված գրառումներ 9. տեղեկատվության որոնում 10. ռեֆերատ:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1-ին ընթացիկ քննություն. Բանավոր հարցում. առավելագույնը 4 միավոր 2-րդ ընթացիկ քննություն. Բանավոր հարցում. առավելագույնը 5 միավոր Ընթացիկ ստուգումներ. (տարբեր առաջադրանքներ)՝ առավելագույնը 8 միավոր Մասնակցության միավոր. առավելագույնը՝ առավելագույնը 3 միավոր</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Նախնադարի պատմության առարկան, նշանակությունը, պարբերացումն ու ժամանակագրությունը: Թեմա 2. Նախնադարի դարաշրջանի պատմական աղբյուրները: Թեմա 3. Նախնադարի պատմության պատմագրությունը: Հին մարդկանց պատկերացումները ժողովուրդների մասին: Ազգաբանական դիտարկումները միջնադարում: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և ազգաբանական գիտելիքների ընդլայնումը: Նախնադարյան հասարակության մասին գիտելիքների կուտակումը և դրանց ընդհանրացումները XIX դարում: Թեմա 4. Նախնադարի հասարակության կազմավորումը. նախահամայնքի դարաշրջանը՝ մարդու ծագումը: Մարդագոյացման պրոցեսի շարժիչ ուժերը: Մարդու մերձավոր նախնիները և մարդացման գործընթացի տեղն ու ժամանակը: Հնագույն և հին հոմինինները: Թեմա 5. Մարդկային հասարակության ծագումը՝ նախահամայնք: Մեռական հարաբերությունները նախահամայնքում: Մտածողության և խոսքի ծագման խնդիրը: Գաղափարական պատկերացումների սաղմերը: Թեմա 6. Մարդագոյացման պրոցեսի ավարտը, ժամանակակից տեսակի մարդու հանդես գալը, ռասսաների ծագումը, համայնատոհմական կարգերի առաջացումը: Թեմա 7. Վաղ նախնադարյան համայնքը: Մեռատարիքային խմբերը վաղ նախնադարյան համայնքում, ինիցիացիա: Ամուսնությունը և ընտանիքը, իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը վաղ նախնադարյան համայնքում: Թեմա 8. Ուշ նախնադարյան համայնք: Արտադրող տնտեսության առաջացումը, բնակչությունը և նրա վերարտադրությունը: Մեռատարիքային կազմակերպություններ: Ամուսնությունը և ընտանիքը: Իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը: Թեմա 9. Դասակարգային հասարակության հաստատությունների հանդես գալը: Մտրկությունը և նրա ձևերը: Մենամուսնական ընտանիք: Դրացիական համայնքի ձևավորումը: Հոգևոր մշակույթի զարգացումը:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ալեքսեև Վ., Պերշից Ա., Նախնադարյան հասարակության պատմություն, Եր., 2012: 2. Марков Г., Первобытное общество: Учебное пособие., М., 2009.</p>

1. 0304/B27	2. Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն՝	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ /շաբ.	5. 16 /0/4	
6. 6-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
կեսին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 23.** Արաբական երկրները 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին: Աֆրիկայի բաժանման ավարտը /19-րդ դ. վերջին երեսնամյակ – 20-րդ դ. սկիզբ/ Հարավային Աֆրիկայի գաղութային բաժանման ավարտը: **Թեմա 24.** Չինաստանը 19-րդ դարի վերջին երեսնամյակում. **Թեմա 25.** Ասիայի զարթոնքը. Չինաստանը 1900 –1914 թ.թ.: Հնդկաստանը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 26.** Ասիայի և Աֆրիկայի երկրները 20-րդ դարասկզբին: Ճապոնիայի վերածուրդը գաղութային տերության: Ճապոնիան 20-րդ դարի առաջին կեսին. Ճապոնիայի գաղութային և տնտեսական հավակնությունները և դրա կրախը: **Թեմա 27.** Հնդկաստանը Բրիտանական կայսրության մաս. Ազգային ազատագրական պայքարի վերելքը. Մ. Գանդի, Ջ. Ներու Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարում: **Թեմա 28.** Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները ասիական և աֆրիկյան երկրների վրա: **Թեմա 29.** Ազգային ազատագրական շարժումների վերելքը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: **Թեմա 30.** Հեռավոր Արևելքի երկրները 20-րդ դարի երկրորդ կեսին: Գաղութատիրական համակարգի ազդեցությունը երրորդ աշխարհի երկրների հասարակական քաղաքական զարգացումների վրա:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Говоров Ю., История стран Азии и Африки в новейшее время, Кемерово, 1997.
2. История стран Азии и Африки в новое и новейшее время, под ред. В. С. Кошелева, М. 2002.
3. Новейшая история стран Азии и Африки, 20 век, под ред. А. Родригеса, М. 2001-2004.
4. Системная история международных отношений, т. 1, 2, под ред. А. Богатунова, М. 2007.
5. Международные отношения и внешняя политика СССР, сборник документов (1871-1957гг.), Москва, 1957.

1.0302/ B28	2.Գրաբար	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 0/0/20	
6. 8-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է հակիրճ ներկայացնել գրաբարը՝ որպես գրական լեզու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով: Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:</p>		
<p>Դասընթացի խնդիրներն են՝</p>		
<ol style="list-style-type: none"> 1. ուսանողին ներկայացնել գրաբարի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ուղղագրության նորմերը, 2. իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը, 3. լեզվաբերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը, 4. տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործումը, 5. հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանումը: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p>		
<p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p>		
<ol style="list-style-type: none"> 1. սահմանելու և նկարագրելու գրաբարի զարգացման փուլերը, 2. ներկայացնելու գրաբարի գրության և արտասանության փոխհարաբերությունները, գրաբարի հնչյունափոխությունը, 3. վերարտադրելու և թվարկելու գրաբարի բայ խոսքի մասի թեքական այն առանձնահատկությունները, որոնցով գրաբարը տարբերվում է ժամանակակից հայերենից: 		
<p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p>		
<ol style="list-style-type: none"> 1. անսխալ ընթերցելու, մեջբերելու և մեկնաբանելու գրաբար տեքստերը և զերծ մնալու գրաբար ուղղագրական սխալներից, 2. խոնարհելու բայերը բոլոր ժամանակային ձևերով, 3. թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ արժևորելով դրանք տեքստում: 		
<p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p>		
<ol style="list-style-type: none"> 1. բացահայտելու գրաբարի ոճերը, բայաձևերի քերականական իմաստները, 2. ճիշտ վերծանելու բառերի կառուցվածքային պլանում կատարված պատմական հնչյունափոխության դրսևորումները, մեկնաբանելու երկրաբառների և եռաբառաբառների հնչյունաբանական փոփոխությունները, 		

3. մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունք(ներ)ը.</p> <p>Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. գործնական աշխատանք</p> <p>2. զրույց</p> <p>3. խմբային աշխատանք:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p><i>1-ին ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք՝ առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>2-րդ ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք, առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>Ընթացիկ ստուգում</i>՝ (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i>՝ (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Գրաբարը՝ որպես հին հայերենի զարգացման շրջան: Գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները:</p> <p>Թեմա 2. Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: Թեմա 3. Գրաբարի դերբայները:</p> <p>Թեմա 4. Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ:</p> <p>Թեմա 5. Գրաբարի անկանոն բայերը: Թեմա 6. Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր: Գրաբարի բաղադրյալ ժամանակները: Թեմա 7. Գրաբարի անվանական հոլովումը: Թեմա 8. Գրաբարի դերանվանական հոլովումը: Թեմա 9. Անձնական դերանունները և նրանց հոլովումը: Թեմա 10. Յուզական դերանունները և նրանց հոլովումը: Թեմա 11. Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: Թեմա 12. Ածական անուն: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Թվականը գրաբարում: Թեմա 13. Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1977:</p> <p>2. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:</p> <p>3. Գոճանյան Պ., Դասական գրաբարի գործնական քերականություն, Եր., 2011:</p> <p>4. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:</p> <p>5. Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1975:</p>

1. 0202/B42	2. Հայ և համաշխարհային արվեստի պատմություն	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 9-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել նախնադարյան արվեստին, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հին Հռոմի և Հունաստանի մշակույթների պատմության, կրոնա-դիցաբանության, արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների հետ, ձևավորել գիտելիքներ վերածննդի ժամանակաշրջանի, XVII-XVIII դդ. եվրոպական արվեստի, XIX-XX դդ. արևմտաեվրոպական և ռուսական գեղարվեստական ուղղությունների մասին /ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ, մոդեռն ոճ, էքսպրեսիոնիզմ, կուբիզմ, աբստրակցիոնիզմ, ֆովիզմ, ֆուտուրիզմ, դադաիզմ, սյուրռեալիզմ, պոստմոդեռնիզմ/, ծանոթացնել հայ արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին և արվեստագետներին, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Միջուրոքում: Ներկայացնել հայ արվեստի տեղը համաշխարհային արվեստի համատեքստում, բացահայտել հայ արվեստի կապերը հունական, հռոմեական, բյուզանդական, պարսկական, արաբական, ռուսական, եվրոպական արվեստների հետ: Յուզադրական նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ներկայացնել ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը: Ձևավորել հուշարձանների գիտական վերլուծությունների մասին պատկերացում:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <p>1. «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի բովանդակության տիրապետում ուսանողների կողմից,</p> <p>2. դարձնել արվեստի կարևոր հուշարձանների հաղորդակիցը իյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա</p>		

կամ անմիջականորեն,
 3. ուսանողների մոտ ձևավորել լսարանային և արտալսարանային աշխատանքների պլանավորում, ստուգումներ նյութի ուսումնասիրության ընթացքում (սեմինարներ, ինքնուրույն աշխատանքներ, ցուցահանդեսների այցելություն և այլն):

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
 ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. ներկայացնելու համաշխարհային և հայ արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, տալ արվեստի սահմանումը, թվարկելու արվեստի տեսակները, ոճերը,
2. բացատրելու արևելյան բունակալական երկրների և անտիկ աշխարհի դիցաբանությունը, թվարկելու համաշխարհային և ազգային կրոնները, բացահայտելու արվեստի հետ դրանց կապը, համաշխարհային արվեստի զարգացման առանձնահատկությունները,
3. ներկայացնելու համաշխարհային և հայ արվեստի առավել հայտնի հուշարձաններին և հայտնի վարպետների ստեղծագործությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու համաշխարհային և հայ արվեստի խնդիրները,
2. զանազանելու տարբեր երկրների արվեստների գլխավոր առանձնահատկությունները, բնորոշիչ գծերը,
3. տեսակյութերի, կարճամետրաժ ֆիլմերի և իլյուստրատիվ նյութերի միջոցով ցուցադրելու և վերլուծելու արվեստի համաշխարհային հռչակ վայելող ստեղծագործությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները,
2. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով,
3. գնահատելու արվեստի գործերի գեղարվեստական արժեքը:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. լսարանայի ցուցադրություններ
3. տեսաֆիլմեր
4. քննարկում
5. բանավեճ
6. սեմինար պարապմունք
7. ռեֆերատ/էսսե
8. անհատական և խմբային առաջադրանքներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ինքնուրույն աշխատանք. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)
Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)
Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ներածություն. Նախնադարյան արվեստ: **Թեմա 2.** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները: **Թեմա 3.** Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջանները և հուշարձանները: **Թեմա 4.** Միջնադարյան արևելաքրիստոնեական և արևմտաքրիստոնեական արվեստ.: **Թեմա 5.** Վերածննդի արվեստը: **Թեմա 6.** XVII դարի արվեստի ընդհանուր բնութագիրը. իտալական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: **Թեմա 7.** 18-19-րդ դդ արվեստի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 8.** Իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ: **Թեմա 9.** Մոդեռնիզմի ուղղությունները: **Թեմա 10.** Արդի արվեստ: **Թեմա 11.** Հին հայկական և ուրարտական արվեստ: **Թեմա 12.** Միջնադարյան հայ արվեստ: **Թեմա 13.** Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ դարի 1-ին կեսին: **Թեմա 14.** Խորհրդային շրջանի հայ արվեստը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Կուզմինա Մ., Մայցևա Ն., Արտասահմանյան արվեստի պատմություն, Եր., 2003:

2. Հակոբյան Հ., Հասարթյան Մ., Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց, Եր., 2005:
3. Памятники мирового искусства, т 7, Т 8, М. 1971-1987:
4. Третьяковская галерея, М., 1972.
5. Թորոմանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ.1, հ 2, Եր., 1942-1948:
6. Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Բ, Գ, Դ Եր., 1971-1987:

1. 0304/B42	2. Ուրբանիզմի պատմություն	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 Ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 10-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել ուրբանիզացման գլոբալ հիմունքները, ուրբանիզացիայի հետազոտությունը, նրա համակարգային մոտեցումը գեոուրբանիստիկայում, քաղաքային բնակչության թվի շարժընթացը և ուրբանիզացման գործընթացները:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել ուրբանիզացման գլոբալ հիմունքները, 2. ներկայացնել ուրբանիզացման գործընթացները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ուրբանիզացման գլոբալ հիմունքները, 2. նկարագրելու քաղաքային բնակչության թվի շարժընթացը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. դիտարկելու քաղաքային համակարգերի փոփոխությունը, քաղաքային բնակչության թվի շարժընթացը ուրբանիզացիայի համապատկերում, 2. մեկնաբանելու ուրբանիզացիայի տարածքային զարգացման օրինաչափությունները, 3. վերլուծելու Հայաստանի քաղաքային բնակչության թվի շարժընթացը և ուրբանիզացման գործընթացները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 2. աշխատելու թիմում, 3. կատարելու հետազոտական աշխատանքներ: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած կապը: Ա4. Ներկայացնելու և մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները: Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. զեկուցում 4. ռեֆերատ 5. քննարկումներ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ինքնուրույն աշխատանք. (առավելագույնը 4 միավոր միավոր) Ընթացիկ ստուգում. (առավելագույնը 4 միավոր միավոր) Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներածություն: Քաղաքագոյացման պատմության սկզբնաղբյուրներն ու դրանց վերլուծությունը: Թեմա 2. Նստակյաց բնակավայրերի առաջացումը և քաղաքային հեղափոխությունը: Սրբավայրի, բնակավայրի և ամրացված կետի նշանակությունը քաղաքագոյացման գործընթացում: Թեմա 3. Քաղաքագոյացման գործընթացը՝ նախաքաղաք: Քաղաքագոյացման հիմնական օջախները: Տաճարական քաղաքի ձևավորման փուլերը: Թեմա 4 Հնագույն քաղաքներն ու նրանց բնույթը: Թեմա 5. Քաղաքագոյացման էգեյան կենտրոնը, դրա առանձնահատկությունները</p>		

Պոլիսի ծագումը: Քաղաքաբնակից քաղաքացի և իդեալական քաղաքը: **Թեմա 6.** Հելլենիստական բացարձակապետությունն ու քաղաքը: Հոմերը որպես աշխարհի կենտրոն: **Թեմա 7.** Միջնադարյան քաղաքն ու նրա գործառույթները: **Թեմա 8.** Քաղաքագոյացման գործընթացի Հայկական լեռնաշխարհում: **Թեմա 9.** Մեծ Հայքի քաղաքները միջնադարում և նրանց գործառույթները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մանասյան Մ., Բնակչության աշխարհագրություն, Եր. 2010:
2. Пивоваров Ю., Основы геоурбанистики, М.1999.
3. Бочаров Ю., Производство и пространственная организация городов, М. 1987г,
4. Лаппо Г., Города на пути в будущее М.1987
5. Пивоваров Ю.Л., Основы геоурбанистики / Пивоваров Ю.Л. – М.: Гуманитар. изд. центр «Владос», 1999.

1. 0305/B54	2. Դասական կամ արևելյան լեզուներ. վրացերեն/ադրբեջաներեն	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 8-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել վրացերեն կամ ադրբեջաներեն գրային ու հնչյունաբանական համակարգերը, ուսուցանել վրացերենով կամ ադրբեջաներենով կարդալու և թարգմանելու տեխնիկան:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, 2. սովորեցնել վրացերենով կամ ադրբեջաներենով հաղորդակցվել: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու վրացերենի կամ ադրբեջաներենի քերականական և ձևաբանական համակարգին բնորոշ հիմնական օրինաչափությունները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կարդալու և հասկանալու վրացերեն կամ ադրբեջաներեն լեզվով: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 2. աշխատելու թիմում: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույնք(ներ)ը.</p> <p>Բ2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:</p> <p>Գ1. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p>Գ2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ3. Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ4. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարել աշխատանքային թիմ, աշխատել թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p>Գ5. Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. քննարկումներ 4. բանավեճեր: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>1-ին ընթացիկ քննություն. (գրավոր աշխատանք՝ առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p>2-րդ ընթացիկ քննություն՝ (գրավոր աշխատանք, առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p>Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p>Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Հնչյունական համակարգը: Չայնավորները և նրանց արտաբերությունը: Բաղաձայն հնչյունների փոփոխությունները խոսքի մեջ: Թեմա 2. Լեզվի բառային կազմը և բառային հիմնական ֆոնդը: Թեմա 3. Ձևաբանության հիմնական կարգը: Նախադասության շարահյուսական կառուցվածքը՝ պարզ և բարդ նախադասություն:</p>		

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Գորգաձև Ռ., Հայերեն-վրացերեն գրուցարան, Երևան-Թբիլիսի, 2004:

2. Մովսիսյան Լ., Ադրբեջաներենի դասագիրք, Եր., 2012:

1. 0304/B54	2. Դեմոկրատիայի պատմություն	3. 6 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ.	5.16/0/4	
6.9-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի ծնունդը, զարգացումը և անկումը անտիկ քաղաքակրթության, մասնավորապես պոլիսային համակեցության համատեքստում, քննության ենթարկել անտիկ ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցը (քաղաքացիության ինստիտուտ, աշխարհաժողով, պետական խորհուրդ, պաշտոնեություն, դատարաններ և այլն), գաղափարախոսական հենքը, ժողովրդավարության դրսևորումները միջնադարյան Եվրոպայում, դիտարկել «ժողովրդավարություն» հասկացության մշակումը, նրա հարաբերակցումը քաղաքական կառավարման մյուս ձևերի հետ անտիկ և միջնադարյան հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի ծիրում:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ժողովրդավարությունն իբրև հասարակության կառավարման ձևի առաջացման պատճառները, զարգացման փուլերը Հին Հունաստանում, Հռոմում և միջնադարյան Եվրոպայում, 2. համեմատելու անտիկ և միջնադարյան ժողովրդավարության առանձնահատկությունները, 3. բացատրելու ժողովրդավարական հաստատությունների գործառույթները, իրավասությունները, դրանց գործառման ընթացակարգը, 4. սահմանելու անտիկ ժողովրդավարության զարգացման ընդհանուր միտումներն ու առանձնահատկությունները: 		
<p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. մասնակցելու ժողովրդավարության վերաբերյալ քննարկումներին, 2. իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջոլորտային հետազոտությունների վերլուծություն, 3. ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ: 		
<p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. օգտվելու մասնագիտական գրականությունից, 2. մասնակցելու բազմաբնույթ քննարկումներին, վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները, 3. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները, 4. պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, 5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը: Ա4. Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները: Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. դիդակտիկ նյութերի օգտագործում 4. բանավեճ 5. կլոր սեղան-քննարկում: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ինքնուրույն աշխատանք. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր) Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր) Եզրային կիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>		

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ժողովրդավարական կարգի կայացման պատճառները Աթենքում: Ժողովրդավարական հաստատությունները, դրանց համալրման սկզբունքները, գործառույթները, իրավասությունները, գործառույթը Հին Հունաստանում: **Թեմա 2.** Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Հին Հռոմում: Հանրապետական կարգի ճգնաժամի և անկման պատճառները: Հռոմեական ժողովրդավարության պատմական նշանակությունը: **Թեմա 3.** Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Միջնադարյան Եվրոպայում: **Թեմա 4.** Ժամանակակից ժողովրդավարության մեխանիզմների ամրագրումը 18-րդ դարի վերջին Միացյալ Նահանգներում: **Թեմա 5.** Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունն և դրա ազդեցությունը 19-րդ դարի Եվրոպայի քաղաքականացման և ժողովրդավարացման հիման վրա: **Թեմա 6.** Արդի ժողովրդավարության տարբերակների կոնսոլիդացումը Ամերիկյան և Ֆրանսիական ժողովրդավարության ձեռքբերումների հիման վրա: **Թեմա 7.** Ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը արդի դարաշրջանում: Հայաստանը արդի ժողովրդավարության համատեքստում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Буйчик А.Г., Зайнагабдинова Э.Ч., Сорокина Е.В., История социума и демократии. В 2 кн. Книга 1: Древний мир, Средневековье и эпоха Возрождения /А.Г.Буйчик, Э.Ч.Зайнагабдинова, Е.В.Сорокина; СЗ НИИ КиПН. СПб., 2007.
2. Dunn J., Democracy: a history. Atlantic Monthly Press, 2006
3. Dunn J. Democracy: a history. Atlantic Monthly Press, 2006
4. Keane J. Violence and Democracy. Cambridge University Press, 2004
5. Ober J. Democracy and knowledge: innovation and learning in classical Athens. Princeton University Press, 2008

1. 0304/B44	2. Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմություն	3.6 ECTS կրեդիտ
--------------------	---	------------------------

4. 5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
----------------------	------------------	--

6.8-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
------------------------	---------------------------------	--

8. Դասընթացի նպատակն է ներկայացնել հայ ժողովրդի պատմության անկյունաքարային նշանակության հիմնախնդրի՝ հայկական հարցի և վերջինիս սերտորեն առնչված Հայոց ցեղասպանության պատմությունը, պարզաբանել թեմայի քաղաքական, մշակութային և բարոյական կարևորությունը, արդիականությունն ու անդրադարձը ներկա տարածաշրջանային քաղաքական գործընթացներում:

Դասընթացի խնդիրները.

1. ներկայացնել Հայկական հարցի առաջացման, նրա էության, զարգացման փուլերը,
2. վերլուծել հայկական հարցի ուղղությամբ հայ քաղաքական կուսակցությունների ռազմավարությունը և մարտավարությունը,
3. ներկայացնել Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու Հայկական հարցի առաջացման, նրա էության, զարգացման փուլերի շուրջ պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքները,
2. ներկայացնելու Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների և միջազգային դիվանագիտության դիրքորոշումը,
3. վերլուծելու Հայկական հարցի ուղղությամբ հայ քաղաքական կուսակցությունների ռազմավարության և մարտավարության փոփոխությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գնահատելու Հայկական հարցի ու վերջինիս հիմնական փուլերի պատմությունը,
2. մեկնաբանելու Հայկական հարցը՝ իբրև միջազգային քաղաքական հիմնահարցը,
3. մեկնաբանելու և վերլուծելու Հայոց Մեծ եղեռնի պատճառներն ու ունեցած հետևանքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. աշխատելու թիմում:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Բ1.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:

Բ2.Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ և լուծումներ:

Բ5.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Բ6.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման

<p>ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Դասախոսություն 2. զեկուցում 3. բանավեճ:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p><i>1-ին ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք՝ առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>2-րդ ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք, առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>Ընթացիկ ստուգում.</i> (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p><i>Եզրափակիչ քննություն.</i> (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Հայկական հարցի ծագումը և էությունը: Թեմա 2. Հայկական հարցի զարգացման փուլերը: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 4. Հայկական հարցը հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: Թեմա 5. Հայկական հարցը արդի փուլում, նրա բովանդակությունը և լուծման եղանակները: Թեմա 6. Հայոց ցեղասպանության պատճառները: Թեմա 7. Ցեղասպանության իրագործման փուլերը: Թեմա 8. Հայոց ցեղասպանության դասերն ու հետևանքները: Թեմա 9. Միջազգային իրավունքը և ցեղասպանությունը:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը. բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Եր., 1995: 2. Լազյան Գ., Հայաստան և Հայ Դատ, Եր., 1991: 3. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյան իմբ., Եր., 1991: 4. Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման /1915-2003/, Եր., 2004: 5. Հայոց ցեղասպանությունը, Եր., 2001:

1. 0304/B54	2. Հռոմեական ժառանգությունը և եվրոպական հանրույթը	3. 6 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 8-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հռոմեական քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերը (լատիներեն լեզու, պետական կառույց, իրավունք, մշակույթ, արտադրական և մտահոգնոր տեխնոլոգիաներ և այլն) և նրա ազդեցությունը եվրոպական միջնադարյան, նոր և նորագույն քաղաքակրթության նկարագրի վրա:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել եվրոպական քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման շրջափուլերը՝ սկսած հռոմեական դարաշրջանից մինչև մեր օրերը, 2. ամբողջացնել համաշխարհային պատմության դասընթացներում ձեռք բերած գիտելիքները եվրոպական պատմության վերաբերյալ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու եվրոպական քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման շրջափուլերը՝ սկսած հռոմեական դարաշրջանից մինչև մեր օրերը՝ ըստ հիմնարար պետական, հասարակական կառույցների, տեխնոլոգիաների, մշակութային և կրոնական հարացույցների, 2. մեկնաբանելու եվրոպական ինքնության և պատմական տարբեր շրջափուլերում եվրոպական համընդհանրության տարբեր հարացույցները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. եվրոպան դիտարկելու իբրև միասնական քաղաքակրթական գործընթաց, 2. ամբողջացնելու համաշխարհային պատմության դասընթացներում (Անտիկ պատմության, Միջին դարերի պատմության, Նոր պատմության, Նորագույն պատմության) ձեռք բերած գիտելիքները եվրոպական պատմության վերաբերյալ, <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 2. աշխատելու թիմում: 		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.		

<p>Ա4.Ներկայացնելու և մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:</p> <p>Բ1.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:</p> <p>Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:</p> <p>Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:</p> <p>Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. զեկուցումներ:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p><i>1-ին ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք՝ առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>2-րդ ընթացիկ քննություն</i>՝ (գրավոր աշխատանք, առավելագույնը՝ 4 միավոր)</p> <p><i>Ընթացիկ ստուգում</i>. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i>. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Հռոմեական քաղաքակրթության ընդհանուր բնութագիրը՝ պետական, հասարակական կառույց, գաղափարախոսություն, իրավունք, արտադրական տեխնոլոգիաներ, մշակույթ, լեզու, կենցաղավարություն ևն: Թեմա 2. Հռոմեական տերության ձևավորումը (Ք. ա. II - Ք. հ. III դդ.): Թեմա 3. Հռոմեական խաղաղության հարացույցը: Թեմա 4. Հռոմեական կայսրությունը իբրև միջազգային տարասեռ հարաբերությունների միջավայր: Թեմա 5. Ռոմանականացման գործընթացը Արևմուտքում՝ քաղաքներ, վարչական ապարատ, տեխնոլոգիաներ, լատիներեն լեզու, մշակույթ, հռոմեական ապրելաձև ևն: Թեմա 6. Ուշ անտիկ դարաշրջան (Ք. ա. 3-7-րդ դդ.): Թեմա 7. Բարբարոսական արշավանքները և հռոմեական քաղաքակրթության կերպափոխությունը: Թեմա 8. Արևմտավրոպական քաղաքակրթությունը իբրև հռոմեական և բարբարոսական աշխարհների համաձուլման միջավայր: Թեմա 9. Միջնադարյան քաղաքակրթական կենտրոնները Արևմտյան Եվրոպայում: Թեմա 10. Վաղ պետական կազմավորումները և ժողովուրդների ձևավորման գործընթացը: Թեմա 11. Եվրոպայի քաղաքական միասնության (կայսրության) գաղափարը (Կարլոս Մեծ, Օտտոն Ա): Թեմա 12. Պապականությունը և քրիստոնեական համընդհանրությունը: Թեմա 13. Քաղաքական բազմազանությունը և հոգևոր-մշակութային ընդհանրությունը Արևմտյան Եվրոպայում: Թեմա 14. Վերածնունդը և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: Թեմա 15. Ռեֆորմացիան և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: Թեմա 16. Արդյունաբերական քաղաքակրթությունը (17-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ) և հռոմեական ժառանգությունը: Թեմա 17. Հասարակության նորացումը՝ տեխնոլոգիաներ, պետական կառավարման ձևեր (հեղափոխություններ, լուսավորչական միապետություն, պառլամենտարիզմ), հասարակական միտք ևն: Թեմա 18. Հետարդյունաբերական քաղաքակրթությունը և հռոմեական ժառանգությունը (20-րդ դ. կեսից մինչև մեր օրերը): Թեմա 19. Եվրամիությունը և եվրոպական համընդհանրության արդի հարացույցը՝ միություն բազմազանության մեջ:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Яковец Ю., История цивилизаций, М, 1997. 2. Моисеева Л., История цивилизаций, Ростов на Дону, 2000. 3. Хачатурян В., История мировых цивилизаций с древнейших времен до конца XX века, М., 2004. 4. История Европы, в 8 томах, М. 1988. 5. Шпенглер О., Закат Европы, в 2 томах, М., 1998. 6. Норман Дэвис, История Европы, М., 2005.

1. 0304/B54	2. Փիլիսոփայության պատմություն	3. 6 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 9-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայական մտքի պատմությունը, որը իբրև գիտություն		

<p>ուսումնասիրում է փիլիսոփայական մտքի ձևավորման, լինելիության ու զարգացման օրինաչափությունները:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. բացահայտել փիլիսոփայական ուղղությունների, դպրոցների ձևավորման և զարգացման ընթացքը, փիլիսոփայական ուսմունքների ընդհանրություններն ու յուրահատկությունները, 2. ներկայացնել փիլիսոփայական գիտելիքի կայր մյուս գիտությունների, աշխարհայացքի մյուս ձևերի հետ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու փիլիսոփայական մտքի պատմության հինգ խոշոր պատմաշրջանները իրենց ընդհանրությամբ, 2. բացահայտելու փիլիսոփայական մտքի պատմության հինգ խոշոր պատմաշրջանների ինքնատիպությունը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելու փիլիսոփայական ուղղությունների, դպրոցների ձևավորման և զարգացման ընթացքը: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:</p> <p>Բ5. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p>Բ6. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:</p> <p>Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. զեկուցում 3. ռեֆերատ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ինքնուրույն աշխատանք . (առավելագույնը՝ 4 միավոր միավոր) Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր) Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Փիլիսոփայության պատմության առարկան: Թեմա 2. Հին Արևելքի փիլիսոփայությունը: Թեմա 3. Անտիկ հունական փիլիսոփայություն: Թեմա 4. Դասական շրջանի հունական փիլիսոփայությունը: Թեմա 5. Հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայությունը: Թեմա 6. Միջնադարյան փիլիսոփայություն: Թեմա 7. Միտլաստիկական փիլիսոփայություն: Թեմա 8. Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայությունը: Թեմա 9. Նոր ժամանակի փիլիսոփայությունը: Թեմա 10. Գերմանական դասական փիլիսոփայություն: Թեմա 11. Փիլիսոփայական միտքը 19-րդ դարում: Թեմա 12. 20-րդ դարի փիլիսոփայական ուղղությունները:</p>		
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Բուրժուական փիլիսոփայությունը իմպերալիզմի նախօրյակին և սկզբին, Եր., 1981: 2. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1980 3. Զաքարյան Ս., Փիլիսոփայության պատմություն, Եր., 2000: 4. Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն, Եր., 1983: 5. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Եր., 1979: 		

1. 0304/B54	2. Պատվամենտարիզմի պատմություն	3.6 ECTS կրեդիտ
4.5 ժամ/շաբ	5. 16/0/4	
6.10-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել պատվամենտի՝ որպես պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի և պատվամենտական կարգերի առաջացման ու զարգացման պատմական պայմանները, հետազոտել տարբեր երկրներում պատվամենտի ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք վերջնականորեն օրենսդրականորեն ձևակերպվել և ամրագրվել են ժամանակակից երկրների սահմանադրություններում և օրենսդրական ակտերում:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու տարբեր երկրներում դասային ներկայացուցչական միապետության օրենսդիր մարմնի 		

<p>ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները,</p> <p>2. սահմանելու այդ երկրների զարգացման քաղաքացիական հասարակությունների ձևավորման առանձնահատկությունները,</p> <p>3. գիտակցելու ժողովրդավարական գործընթացների շարժընթացը ամերիկյան և եվրոպական հասարակություններում:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. մասնակցելու կառավարման համակարգերի վերաբերյալ քննարկումներին,</p> <p>2. բազմակողմանիորեն վերլուծելու և գնահատելու երկրի կառավարման պառլամենտական ձևերի արդյունավետությունը,</p> <p>3. իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջոլորտային հետազոտությունների վերլուծություն,</p> <p>4. ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,</p> <p>5. վերլուծելու Հայաստանում կատարվող պառլամենտական փոփոխությունները:</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. օգտվելու մասնագիտական գրականությունից,</p> <p>2. մասնակցելու բազմաբնույթ քննարկումներին, վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները,</p> <p>3. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները,</p> <p>4. պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,</p> <p>5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա1.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:</p> <p>Ա2.Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:</p> <p>Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:</p> <p>Գ3.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. դիդակտիկ նյութերի ցուցադրում 4. բանավեճ 5. կլոր սեղան-քննարկում:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ինքնուրույն աշխատանք. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p>Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p>Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Պառլամենտական համակարգի սկզբնավորումը, ամրապնդումն ու զարգացումը Անգլիայում: Բաժին 2. Պառլամենտական համակարգի սկզբնավորումը, ամրապնդումն ու զարգացումը Ֆրանսիայում: Բաժին 3. Պառլամենտական համակարգի սկզբնավորումը, ամրապնդումն ու զարգացումը ԱՄՆ-ում:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Edited by Tim Carr, Iain Dale, and Robert Waller, The Politicos Guide to the New House of Commons 2015 Profiles of the New MPs and Analysis of the 2015 General Election Results, Biteback Publishing, 2015, 368 p. 2. Roger Awan-Scully, The End of British Party Politics?, Biteback Publishing, ISBN: 9781785903151, 12 April 2018, 208 p. 3. Sophy Ridge, The Women Who Shaped Politics Empowering stories of women who have shifted the political landscape, Hardback, Coronet, ISBN: 978-1473638761, 23 March 2017, 304 p. 4. Helen Jones, How to Be a Government Whip, Biteback Publishing, ISBN: 9781785900624, 18 April 2016, 288 p. 5. Chris Bryant, Parliament: The Biography (II) Volume II: Reform, Hardback, Doubleday, ISBN: 978-0552779968, 4 November 2015, 480 p.

1. 0304/B54	2. Աշխարհաքաղաքականություն	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5.16/0/4	
6. 9-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել աշխարհաքաղաքականության բազմաթիվ հիմնախնդիրների նկատմամբ մասնագիտական պատկերացումներ, պատշաճ գիտելիքներ աշխարհաքաղաքական բարդ գործընթացների վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել աշխարհաքաղաքականության հիմնական դպրոցներն ու ուղղությունները, 2. ներկայացնել աշխարհի համընդհանրացումը՝ գլոբալիզացիան, 3. ներկայացնել ՀՀ ռազմավարության հիմնահարցերը և ուղղությունները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. մեկնաբանելու աշխարհաքաղաքականության հիմունքների տեսական հիմնախնդիրները, 2. ներկայացնելու աշխարհաքաղաքականության որպես գիտության վերլուծության մեթոդաբանական հիմունքները և պատմական հեռանկարները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելու աշխարհի համընդհանրացումը՝ գլոբալիզացիայի պատճառներն ու հետևանքները, 2. մեկնաբանելու արդի դարաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը, 3. մեկնաբանելու ՀՀ ռազմավարության հիմնահարցերը և ուղղությունները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 2. աշխատելու թիմում: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:</p> <p>Բ2.Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:</p> <p>Բ5.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:</p> <p>Բ6.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:</p> <p>Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճեր 4. զեկուցումներ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ինքնուրույն աշխատանք. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p>Ընթացիկ ստուգում. (առավելագույնը՝ 4 միավոր միավոր)</p> <p>Եզրափակիչ քննություն. (բանավոր՝ 8 միավոր առավելագույն արժեքով):</p>		
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Աշխարհաքաղաքականությունը որպես գիտություն և նրա ձևավորման ու զարգացման հիմնական փուլերը:</p> <p>Թեմա 2. Աշխարհաքաղաքականության հիմնական դպրոցներն ու ուղղությունները: Թեմա 3. Աշխարհի համընդհանրացումը՝ գլոբալիզացիա: Թեմա 4. Աշխարհաքաղաքականությունը գաղափարախոսության և աշխարհայացքային տեսանկյունից: Թեմա 5. Արդի դարաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը: Թեմա 6. Մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում: Թեմա 7. Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական շահերը Հարավային Կովկասում և հայ-ռուսական հարաբերությունները հետխորհրդային շրջանում: Թեմա 8. ՀՀ ռազմավարության հիմնահարցերը և ուղղությունները: Թեմա 9. Միջազգային հակամարտությունները և դրանց լուծման ուղիները:</p>		
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p>		

1. Հայաստան 2020. Զարգացման և անվտանգության ռազմավարություն, Եր., 2002:
2. Հայաստանը փոխակերպվող աշխարհում, ՌԱՀՀԿ, Եր., 2006:
3. Гаджиев К.С., Введение в геополитик, М., 2001.
4. Гаджиев К.С., Геополитика Кавказа, М., 2003.
5. Нартов Н.А., Геополитика. М., 2003.

1. 0304/B56	2. Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն	3.6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 16/0/4	
6. 9-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել քաղաքակրթության տեսության պատմությունը, պատմական ճանաչողության ընդհանուր միտումներն ու բովանդակությունը, ծանոթացնել ինչպես քաղաքակրթական գիտակցության, այդպես և քաղաքակրթության տեսության կայացման ու ձևավորման ընթացքին, քաղաքակրթական հայեցակարգերի և մեթոդների կիրառմամբ ուսումնասիրել առանձին պատմական դարաշրջանների փոխակերպությունների քաղաքակրթական նախադրյալներն ու հետևանքները:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել քաղաքակրթության տեսության պատմությունը, 2. ներկայացնել քաղաքակրթական գիտակցության, քաղաքակրթական տեսության կայացման ու ձևավորմանը ընթացքը: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. մեկնաբանելու պատմագիտության զարգացման տարբեր փուլերում պատմության և արդիության փոխհարաբերությունների սահմանները, 2. ներկայացնելու Հինարևելյան, Անտիկ, Միջնադարյան, Արդյունաբերական և Հետարդյունաբերական քաղաքակրթությունների տիպաբանությունը, բացատրելու դրանց բովանդակային և հաստատությունական կառուցվածքը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. մատնանշելու քաղաքակրթության տեսաբաններից յուրաքանչյուրի տեսության հիմնարար բաղադրիչներն ու առանձնահատկությունները, 2. համադրելու քաղաքակրթական փոխակերպությունների առանձնահատկությունները ժամանակի տարբեր տևողությունների համապատկերում: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 2. աշխատելու թիմում: 		
